երկու ամիս ի բանտի կեցեալ, ստիպեցեալ բազմիցս տաճկութիւն, և նա ամենևին հաստատ մնացեալ ի հաւատս. ներկայացուցեալ առաջի Վէզիրին, արարեալ զբազում խոստումս մեծութեան, քիւրք մեծագին, մինչև ցհինգ քսակ դրամ. և նա պատասխանեալ համարձակ դիմօք. Այս զուր է ինձ, թէ բոլոր աշխարհս տաս ոչ հաճիմ. թէ ազատելոց ես զիս ազատեա՛, թէ ոչ՝ հրամայեա սպանանել զիս։ Այսպէս հատեցեալ եղեւ վճիռ զբլխատել ի պարմախղաբուն, և անդէն ևս հասաս պաշին իջեալ ի ձիոյ փաղակչական բանիւ երիցս խօսեալ, և դահիճն զսուրն ի ձեռին, յորդորեալ զնա դառնալ. և նա ամենեւին ոչ հաւանեալ բանից նոցին, ասացեալ է ի յոտին կանգուն կալով հար զիս. և ապա դահիճն միով հարմամբ հատեալ զգլուխ նորին. զի հայք ի նոյն օր ի շուկայս հաւաքեալ են զդրամս իբրու 40 բոլորի չափ և տուեալ դահճին, զի շուտով հատցէ. և նոյն դահիճն ունելով ընդ ինքեան զբամպակս, թաթաւեալ և թաթախեալ ի յարեան նոյնոյ, հայոց արանց և կանանց առնլով զդրամ, մասնիկ մասնիկ բաշխեալ է երեք օր գնացողացն և կեցողացն շուրջ զմարմնով նորին, և ասեն թէ զգլուխն հայոց պատրիարգն առեալ է, և զմի մատն դաղմատացիք, և ի հանդերձէ արենաթաթախ սակաւ ինչ թերևս առ մեզ ևս հասանի, զի ումեմն յանձնեալ եմ. և զլիակատար պատմութիւն սորին ի յառաւել տեղեակ եղողաց գրել տալոց եմ։ Ընմանապէս երկու ամ յառաջ մի պատանի ևս իբրև զայս ի սեբաստիա եղեալ է. և զայսմանէ ևս չանամ գրել տալ։...

Գերյարգութեան քում
Պատրաստական ամենայնի
Հայր Միքայէլ Վ. Սեբաստացի

Ցամի տեառն 1743ին հոկտեմբերի 17ին
գիր երրորդ ի Կոստանդնուպօլսոյ

ՃԻԶ.

Մանր ու զանազան լուրերու ժողովածոյ մըն է հետեւեալը։

Գերյարգելոյ Աբբայ Հօրդ մերոյ, տեառն տեառն Մխիթարայ Աստուածաբանութեան վարդապետի

... Բազումք կարգաւորք զոն, թէ ի լիբանանու, թէ հալէպու, թէ յէրզրումու, թէ ելանօղք քահանայք աստ ի յեկեղեցեաց հայոց, թէ դպրատնցիք և թէ այլք բազումք բաց ի մէնջ աւելի քան զքսան են։ Նաեւ ժողովուրդն յամենայնում աւուր յեկեղեցիս լաթինի լիք են. և ստէպ քաւարան առնել տան մեռանողաց վասն, և երգիչք և սպասաւորքն՝ հայոց կտրիճներն և տղայքն են, ուսեալ զլաթինական եղանակ և լեզու ...։ Ի յոմանս եկեղեցիս յամենայնում աւուր չորս և հինգ կարգաւոր պատարագեն. երբեմն և ես երթամ պատարագել և խոստովանութիւն լսել։ Գաղատացի տէր եղիա Վ. ի մեծի համարի է. ունի զաշակերտ կարգաւորս և զերիտասարդ աշխարհականս, դաս տայ, աշակերտս հանել ջանայ. ի կիրակէի և ի տօնս յեկեղ[եց]ին սուրբ անգօնի քարոզ տայ։ Ի սուրբ պետրոս երբեմն հայոց կարգաւորք, այսինքն պուռսացին, զպրզցին տաճկերէն, և ըստ մեծի մասին պատրի տօմէնիկոսն ջահկեցի հայկաբանօրէն, լաւ քարոզիչ է և ընդունելի յոյժ։ Ի ձէզուիթաց եկեղեցին, ինքեանք ճէզուիթք քարոզ տան տաճկերէն, մինն յառաւօտեան, մինն յերեկոյին. և սոքա ի դուռն եկեղեցւոյն եասախճի ևս կանգնեցուցանեն յաւուրս կիրակէից։ Եւ բնաւ եկեղեցիքն թէ ի վերնատունն, թէ ի հրապարակ եկեղեցւոյն լիք հայք, և ֆռա[ն]կք ոչ երևին։... Մխայլըմ օղլին այժմ ի դրունս մեծամեծ տաճկաց շրջի ընդ աստղագիտաց նոցին վիճի և յաղթօղ գտանի, և ինքն ի համարի ի նոցանէ ունեցեալ լինի, այժմ զնմանէ այսպէս հռչակեցեալ լսի։...

... Ի կողմանէ պատերազմի ոչ ինչ երևելի գործ և զրոյց գոյ. բայց քանի մի հազար պարսիկք խաղաղութեամբ նստեալ են ի սեբաստիա և ոչ ումեք ընասեն, այլ եկեալ են զշահի որդին իւրեանց թագաւոր տանիլ զոր սոքա զօրօք ուղարկեն. և լսեմք